ՌԱՀՀԿ 2013

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՈՒՐՎԱԳԻՐ

Հայաստան-2013. հաղթահարելով դժվարությունները էջ 3

Քաղաքակրթական ուղու որոնումներում էջ 4

Իշխանությունների հերթական վերարտադրությունը կամ ի՞նչն էր բացակայում փետրվարյան ընտրություններում էջ 6

Արտագաղթը զսպող ուժերի հասունացման ժամանակը էջ 8

Հասարակության եւ պետության առողջացման ճանապարհին էջ 10

2013թ. կարեւորագույն իրադարձությունների ժամանակագրությունը էջ 14

ACNIS — ARMENIAN CENTER FOR NATIONAL AND INTERNATIONAL STUDIES

Որո՞նք էին անցնող տարվա հասարակական-քաղաքական կյանքի առանցքային իրադարձությունները, ի՞նչ կորցրեց եւ ի՞նչ շահեց Հայաստանը 2013-ին, կա՞ն արդյոք որակական փոփոխությունների նախանշաններ ներքին եւ արտաքին հարթության վրա: Ծանոթացեք ՌԱՀՀԿ փորձագիտական խմբի ամփոփ տեսլականին:

© Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոն (ՌԱՀՀԿ), 2013
© Armenian Center for National and International Studies (ACNIS), 2013

Հայաստան-2013.
հաղթահարելով դժվարությունները

2013 թվականը ցույց տվեց, որ հասարակական-քաղաքական կյանքում ավելի ու ավելի գերիշխող է դառնում քաղաքացիների իրավունքների համար հարաճուն պայքարը: Մարդիկ ոչ միայն գիտակցեցին, որ իրենք են երկրի տերը, այլեւ նպատակաուղղված ջանադրություն սկսեցին ցուցաբերել՝ պաշտպանելու իրենց իրավունքները:

Այն պահից ի վեր, երբ Հայաստանի հասարակությունը դադարեց հավատալ գոյություն ունեցող կարգերի պահպանման պայմաններում երկրի զարգացման հնարավորությանը, սկիզբ առավ ազգային գժտությունների պատճառներն արմատապես վերահմաստավորելու գործընթացը: Վերարժեւորման ենթարկվեցին մինչ այդ հեղինակավոր թվացող բոլոր կարծիքները, գնահատականները եւ երկրի կենսագործունեության ու զարգացման ավելի նպաստավոր պայմանների համար պայքարի միջոցները:

Արդյունքում, առաջին հերթին, ջարդվեցին «ազգի պաշտպանների ու փրկիչների» մասին կարծրատիպերը. Հայաստանի քաղաքացիները հասկացան, որ իրենցից բացի, ոչ ոք ի զորու չէ փոխել վիճակը երկրում: Իսկ փոփոխությունների էությունը տեսան ազատ ընտրությունների միջոցով պետական իշխանության ձեւավորման համար պայմաններ եւ այդ իշխանության նկատմամբ լիակատար հասարակական վերահսկողության համակարգ ստեղծելու անհրաժեշտության մեջ: Երկրի այդ հանգուցային խնդիրը հասարակության գիտակցության մեջ բյուրեղացավ իր ողջ ակնհայտությամբ: Այդ խնդրի պրիզմայի միջով էլ սկսեց Հայաստանի կենսական իրողությունների վերագնահատումը:

Չի կարելի պնդել, թե այդօրինակ վերագնահատումը միանշանակ ուժեղացրեց Հայաստանի հասարակությանը: Քաղաքացիների մի մասը պարզապես անզոր գտնվեց եւ սկսեց լքել երկիրը, մյուսները հաշտվեցին գոյություն ունեցող կարգերի հետ: Սակայն 2013 թվականը ցույց տվեց, որ հասարակական-քաղաքական կյանքում ավելի ու ավելի գերիշխող դարձավ քաղաքացիների իրավունքների համար հարաճուն պայքարը: Մարդիկ ոչ միայն գիտակցեցին, որ իրենք են երկրի տերը, ոչ թե արժեզրկված քաղաքական դասը, այլեւ նպատակաուղղված ջանադրություն սկսեցին ցուցաբերել՝ պաշտպանելու իրենց իրավունքները:

Ասպարեզ դուրս եկան կազմակերպված նախաձեռնություններ, որոնք կոչված էին պաշտպանելու ազգային հարստությունն ու հանրային սեփականությունը, զինծառայողների իրավունքները, ինչպես նաեւ քաղաքացիների՝ պետական իշխանության ազատ ընտրության իրավունքները: Երկիրը հայտնվեց փոփոխությունների կողմնակիցների եւ անօրինականության կարծրացած մեխանիզմները պաշտպանողների լիակատար դիմակայության հորձանուտում: Ազգային իրողությունների առավել «հանրաճանաչ» նկարագիրը փողոցներում ոստիկանների կուտակումները դարձան:

Իշխող դասակարգը եւ քաղաքական կուսակցությունները հայտնվեցին հալածվածի վիճակում: 2012-13թթ. համապետական ընտրությունների արդյունքում իրենց դիրքերը պահպանած օլիգարխիկ խմբավորումներն ուժեղացնում էին հովանավորների փնտրտուքը երկրի սահմաններից դուրս: Դրա հետեւանքով երկիրը կանգնած էր իր ինքնիշխանությունն ու անվտանգության երաշխիքները կորցնելու սպառնալիքի առջեւ: Քաղաքակիրթ աշխարհի միջազգային կառույցներին ինտեգրվելու ծրագրերը ձախողվեցին, իսկ դաշնակիցներից Հայաստանի ռազմական կախվածությունը խորացավ: Ավելին, գլխավոր դաշնակիցը՝ Ռուսաստանը, սկսեց բացեիբաց նորագույն զենք մատակարարել Հայաստանի հակառակորդներին՝ դրանով իսկ մեր երկրին ստիպելով գնալ ստրկացուցիչ որոշումների: Այդպիսի պայմաններում կտրուկ նեղացան ազգային իր հարստությունները լայնածավալ կողոպուտից պաշտպանելու՝ Հայաստանի հնարավորությունները:

Հասկանալի է, որ երկրում գլխավոր հարցը հետեւյալն էր. կարո՞ղ է արդյոք Հայաստանի հասարակությունը հաղթահարել արտաքին ու ներքին ուժերի կողմից իր երկրի ստրկացման միտումները: Ի վիճակի՞ են արդյոք Հայաստանի քաղաքացիները ճեղքել երկրի զարգացումն արգելակող գործոնները եւ փոխել նրա նորագույն պատմության ընթացքը:

ՌԱՀՀԿ փորձագետները գտնում են, որ դա հնարավոր է փոփոխություններ ցանկացող քաղաքացիների՝ ողջ երկրի հանդեպ համընդհանուր պատասխանատվության բարձրացման դեպքում: Գիտակից քաղաքացիների կառուցողական ակտիվությունը հասարակական կյանքի առողջացման, հակոտնյա երեւույթների հաղթահարման լավագույն դեղատոմսն է:

Քաղաքակրթական ուղու որոնումներում

Եվրասիական աշխարհակարգի ճարտարապետներն այս պահին հետաքրքրված են հետխորհրդային երկրներին ռուսական առանցքի շուրջ պահելու աշխարհաքաղաքական պարզ գաղափարով, ինչի արդյունքում ստեղծվող կառույցները կարող են լինել արհեստական եւ օգտակարության ցածր նիշ ունեցող:

Հայաստանի քաղաքակրթական դեգերումների մասին շատ ավելի լայն տիրույթով կարելի է խոսել, բայց այսօրվա զարգացումների համատեքստում օրակարգը բավականաչափ հստակ է: Եվ խնդիրը սոսկ այն չէ, որ պատմական սովորույթի ուժով մեր երկիրը կրկին հայտնվել է քաղաքակրթական ճամփաբաժանի առջեւ: Խնդիրն այսօր ներկայանում է հարցադրումների անհամեմատ ընդգրկուն տարրապատկերով: Մասնավորապես դրանք են.

- ինչո՞ւ «Եվրոպա կամ Եվրասիա» երկընտրանքն առավել սուր բնույթ ստացավ հատկապես վերջին ժամանակահատվածում,
- որքանո՞վ է Հայաստանը հանդես գալիս իբրեւ ընտրություն կատարող սուբյեկտ,
- ինչպիսի՞ն է ստեղծված իրավիճակի հանրային ընկալումը. ուրվագծվո՞ւմ է արդյոք հասարակության կրիտիկական զանգվածի կոնսենսուս պետության քաղաքակրթական հեռանկարի շուրջ:

Անկախացումից ի վեր արտաքին կողմնորոշումների հարցում Հայաստանի Հանրապետության տեսակետը փոփոխություն չի կրել: Առաջնահերթություն սահմանելու առումով նույնիսկ «Ազգային անվտանգության ռազմավարություն» փաստաթղթում չկա որեւէ հիշատակում. ՀՀ-ն հավասարապես կարեւորում է մասնակցությունը ե՛ւ Եվրոպայում, ե՛ւ հետխորհրդային տարածքում ծավալվող ներգրավման (ինտեգրացիոն) գործընթացներին: Ավելի պարզ ձեւակերպմամբ՝ Հայաստանի եւ Արցախի անվտանգության ռազմաքաղաքական ապահովման հիմնական բաղադրիչ են դիտվել Ռուսաստանի Դաշնության հետ ռազմավարական, դաշնակցային փոխհարաբերությունները եւ անդամակցությունը Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությանը (ՀԱՊԿ): Միաժամանակ որդեգրվել է զարգացման եվրոպական ուղին՝ ընդհանուր արժեքների հիման վրա եվրոպական կառույցների հետ համագործակցության միջոցով: Այստեղ հարկ է, թերեւս, նշել, որ անվտանգության բաղկացուցիչը ինտեգրման ուժգիծն ուղղորդում է դեպի Ռուսաստան կամ Եվրասիա, ինքնությունն ու զարգացման ուղենիշները՝ դեպի Եվրոպա:

Սահաեւ, վերը նշված տրամաբանության շրջանակներում, Հայաստանը 2009-10 թվականներից մասնակցում էր Եվրամիության Արեւելյան գործընկերության նախագծին եւ ԵՄ-ի հետ բանակցում Ասոցացման համաձայնագիր կնքելու շուրջ՝ միաժամանակ Հայաստանի եւ Արցախի անվտանգության հարցում ապավինելով ՌԴ-ի ռազմաքաղաքական աջակցությանը: Սակայն Ռուսաստանի, Ղազախստանի եւ Բելառուսի նախաձեռնած Մաքսային միությանը միանալու՝ Հայաստանի մտադրության մասին սեպտեմբերի 3-ի մոսկովյան հայտարարությունն «անսպասելիորեն» խախտեց մինչեւ այժմ գործող տրամաբանությունը: Ինչո՞ւ: Ենթադրությունը՝ հաջորդիվ:

Թեպետ Հայաստանը, ինչպես արդեն նշվեց, մոտ երկու տասնամյակ մասնակցում է եվրոպական ներգրավման գործընթացներին, բայց դա եղել է ձեւական, առավելապես խորհրդատվական բնույթ կրող, հիմնականում իմիտացիոն մասնակցություն: Ընդ որում, ներգրավվածության նման բնույթը «հարմարավետ» էր երեք կողմերի՝ ե՛ւ ՀՀ պետական շրջանակների, ե՛ւ Եվրոպայի, ե՛ւ Ռուսաստանի համար: Սակայն 2013թ. նոյեմբերի 28-29-ին Վիլնյուսում Արեւելյան գործընկերության գագաթաժողովը, որի ընթացքում ի սկզբանե նախատեսված էր Եվրամիության հետ Ասոցացման, այդ թվում՝ Խորը եւ համապարփակ ազատ առեւտրի գոտու մասին համաձայնագրի նախաստորագրումը Հայաստանի, Վրաստանի ու Մոլդովայի կողմից, ինչպես նաեւ ստորագրումը Ուկրաինայի կողմից, արդեն որոշակիորեն առարկայացրեց հետխորհրդային երկրների եվրամերձեցումը (գագաթաժողովում Մոլդովան ու Վրաստանը նախաստորագրեցին Ասոցացման համաձայնագիրը, Ուկրաինան ու Հայաստանը՝ ոչ): Մինչվիլնյուսյան շրջանում Ռուսաստանի «նոր» իշխանությունը թարմ լիցք էր հաղորդել, այսպես կոչված, եվրասիական վերաինտեգրման գործընթա-

ցին՝ հետխորհրդային տարածքի հաշվին Եվրամիության ծավալմանը հակադրվելու միտումով: Այստեղ կարեւոր է հաշվի առնել մի «փոքր» նրբերանգ. Եվրամիության Արեւելյան գործընկերության նախագծի մեկնարկը եւ առաջխաղացումը տեղի ունեցան մի շրջանում, երբ ՌԴ նախագահը Վլադիմիր Պուտինը չէր, ու նրա երկրորդ «գալուստը» պետք է որ թուլացներ եվրամերձեցման տեմպերը: Եվ, չնայած ո՛չ եվրոպական, ո՛չ էլ նոր թափ առած եվրասիական ներգրավման առաջնային թիրախը ամենեւին էլ Հայաստանը չէր, բայց երկիրը հայտնվեց բավական հետաքրքիր իրավիճակում. ԵՄ-ի հետ 3-4 տարի տեւած բանակցություններից հետո ՀՀ-ն բախեց Մաքսային միության դռները եւ հայտ ներկայացրեց դառնալու 2015թ. ստեղծվելիք Եվրասիական միության լիիրավ անդամ:

Այսպիսով՝ Հայաստանն այս պահին անվտանգություն-զարգացում պարզ դիխոտոմիայի տրամաբանության մեջ է, այն է՝ եթե սպառնալիքի տակ է երկրի անվտանգությունը, ստիպված որոշում ընդունողները նահանջ են կատարում «եվրազարգացումից»: Համենայն դեպս՝ առժամանակ (այլ հարց է ու նաեւ ընկալման խնդիր, թե ինչպես ենք պատկերացնում զարգացումը եւ որտեղ ենք տեսնում անվտանգությունը): Եվ ստացվում է՝ հնարավոր չէ անվտանգության հարցում անվերջ ապավինել տարածաշրջանի գերտերությանը, բայց չմասնակցել նրա իսկ նախաձեռնած աշխարհաքաղաքական նախագծերին, եթե անգամ դրանք անհեռանկարային են Հայաստանի համար:

Իսկ դա ակնհայտ է: Հետխորհրդային տարածքում սկզբնավորվող ներգրավման գործընթացներն իրենց հիմքում չունեն միավորման համար անհրաժեշտ նախադրյալներ՝ ո՛չ հասարակությունների քաղաքակրթական կամ արժեհամակարգային ընդհանրություն, ո՛չ էլ տնտեսական արդյունավետության մեխանիզմներ: Եվրասիական աշխարհակարգի ճարտարապետներն այս պահին հետաքրքրված են հետխորհրդային երկրներին ռուսական առանցքի շուրջ պահելու աշխարհաքաղաքական պարզ գաղափարով, ինչի արդյունքում ստեղծվող կառույցները կարող են լինել արհեստական եւ օգտակարության ցածր նիշ ունեցող: Համենայն դեպս՝ Հայաստանի պարագայում այդպես է. գործող կամ ստեղծվելիք որեւէ նախագիծ չի հավակնում, օրինակ, բարելավել ՀՀ-ի կարեւորագույն հիմնախնդիրներից մեկը՝ փակ սահմանների ու հաղորդակցությունների հարցը:

Այսպես՝ ստեղծվել է արտասովոր մի իրավիճակ, երբ Հայաստանը մի կողմից կանգնած է քաղաքակրթական երկընտրանքի առջեւ, մյուս կողմից, սակայն, ընտրողը (որոշում կայացնողը) ինքը չէ: Այս պարագայում խիստ կարեւորվում են հանրության կողմից խնդրի բանական ընկալումը եւ այդ հիմքով ձեւավորվող հասարակական կոնսենսուսն ու ինքնորոշումը: Հիմնականի շուրջ համաձայնության գալով, թերեւս, կձեւավորվի իրավիճակի վրա անհրաժեշտ չափով ազդելու ներուժը:

Սակայն Հայաստանում միջազգային զարգացումների՝ առավելաբար այլոց վարած քաղաքականության մասին դատում են զգացմունքային մակարդակում եւ բարոյական չափանիշներով՝ «լավ ու վատ», «բարի ու չար» կատեգորիաներով (այս երկիրը վատն է, այն երկիրը մեր բարեկամն է եւ այլն): Բացի դրանից, հանրությունն ինքը դեռեւս արժեհամակարգային հստակեցումների կարիք է զգում, որպեսզի կարողանա համարժեքորեն գնահատել իր ներսում ու իր շուրջը տեղի ունեցողը եւ գտնել լուծումներ: Ավելի պարզ ասած՝ պետք է ճանաչել եւ ամրացնել սեփական ինքնությունը, ապա հասկանալ իրավիճակն ու նրա դերակատարներին եւ համատեղ ջանքերով փնտրել ու գործի դնել առկա բոլոր հնարավորությունները:

Աշխեն Մուշեղյան
Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոնի հանրային կապերի մասնագետ

Իշխանությունների հերթական վերարտադրությունը

Կամ՝ ի՞նչն էր բացակայում փետրվարյան ընտրություններում

Այն պայմաններում, երբ իշխանություններն ու պետությունը սերտաճած են, որպես կանոն, իշխանափոխությունը, արմատական ժողովրդավարական փոփոխությունները հնարավոր են դառնում, եթե երկրում ձեւավորված է պրոդեմոկրատական հզոր շարժում՝ իր կուռ ռազմավարությամբ եւ մարտավարությամբ:

Հայաստանում 2013 թվականը ընտրությունների տարի էր: Փետրվարի 18-ին կայացան հերթական նախագահական ընտրությունները, որոնց արդյունքում իշխող Հանրապետական կուսակցության նախագահ Սերժ Սարգսյանը հնարավորություն ստացավ մնալ իր պաշտոնում եւս հինգ տարի: Այս անգամ նույնպես չիրականացան ընտրությունների միջոցով իշխանափոխության հասնելու՝ ընդդիմադիր հանրության մի զգալի հատվածի ակնկալիքները: Ընդդիմությունը դարձյալ չընդունեց ԿԸՀ-ի հրապարակած արդյունքները եւ դրանք վիճարկեց Սահմանադրական դատարանում, որն, իր հերթին, ինչպես միշտ, ուժի մեջ թողեց պաշտոնական տվյալները:

Ընտրություններն առանձնացան նրանով, որ ոչ իշխանական մի քանի լուրջ քաղաքական ուժեր չառաջադրեցին սեփական թեկնածուին, անգամ չպաշտպանեցին այլ թեկնածուի, ըստ Էության, հիմնականում պատճառաբանելով, որ անիմաստ են գտնում մասնակցել ներկա վարչակարգի կողմից իրականացվող ընտրություններին, քանի որ դրանք, միեւնույն է, դատապարտված են կեղծված լինելու: Հարկ է նկատել, որ ընդամենը մեկ տարի առաջ նույն ուժերը մասնակցեցին խորհրդարանական ընտրություններին: Դա թույլ տվեց շատերին ենթադրել, որ իրականում այդ ուժերը 2012-ին էլ հաղթելու հույսեր չեն ունեցել ու մասնակցել են, քանի որ ԱԺ ընտրությունների ժամանակ հնարավորություն կա ստանալու որոշակի մանդատներ եւ գոնե ներկայացված լինելու օրենսդիր մարմնում:

Այդուհանդերձ՝ ընտրությունների նույնիսկ պաշտոնական արդյունքները շատերի համար անակնկալ էին: Նախքան ընտրությունները շատ էր խոսվում, որ իշխանությունները՝ դիմելով ընտրակեղծարարության ավանդական մեթոդների անգամ մի չնչին մասին, հեշտությամբ վերարտադրվելու են, մանավանդ, որ ոչ իշխանական առանցքային ուժերից թեկնածու չունեն ԲՀԿ-ն, ՀԱԿ-ը եւ ՀՅԴ-ն: Ու թեպետ հենց առաջին փուլով իշխանությունն իսկապես վերարտադրվեց, սակայն «Ժառանգություն» կուսակցության առաջնորդ, ինքնառաջադրված թեկնածու Ռաֆֆի Հովհաննիսյանը՝ պաշտոնական արդյունքների համաձայն գրավելով երկրորդ տեղը, ստացավ փորձագետների մեծամասնության կանխատեսածից շատ ավելի ձայներ՝ 539.691 կամ շուրջ 37 տոկոս: Ուշագրավ է, որ Հովհաննիսյանը, ըստ նույն պաշտոնական տվյալների, հաղթող ճանաչվեց Հայաստանի ավելի քան 10 քաղաքներում ու գյուղական բնակավայրերում՝ այդ թվում այնպիսի խոշոր քաղաքներում, ինչպիսիք են Գյումրին, Վանաձորը, Էջմիածինը, Արմավիրը, Աբովյանը, Կապանը եւ այլք: Դա հիմք տվեց նրա կողմնակիցներին պնդելու, որ Հովհաննիսյանի նախընտրական քարոզչության՝ «Հնարավոր է» հիմնական կարգախոսն արդարացրեց իրեն, եւ եթե ընդդիմադիր քաղաքական ու քաղաքացիական սուբյեկտներն ավելի ակտիվ լինեին, ապա նույնիսկ այս վարչակարգի կազմակերպած ընտրություններով հնարավոր էր հասնել իշխանափոխության:

Այս ընտրական գործընթացները եւս ուղեկցվեցին բողոքի գործողություններով, սակայն, ի տարբերություն նախորդ ընտրությունների, այս անգամ սովորական դարձած հանրահավաքներին, երթերին ու պիկետներին ավելացան ընդդիմադիր երկու թեկնածուների կողմից իրականացված հացադուլները: Հանրությունն ականատես եղավ մի արտասովոր երեւույթի՝ բողոքի ակցիաներից մեկն ընթացավ ոչ թե ընտրություններից հետո, այլ ամբողջ ընտրական փուլում՝ ներառյալ նախընտրական քարոզարշավը: Դա թեկնածուներից Անդրիաս Ղուկասյանի հացադուլն էր՝ «Ո՛չ կեղծ ընտրություններին» կարգախոսով: Չնայած այն հանրության կողմից ընկալվեց ոչ միանշանակ, սակայն այս կամ այն կերպ ստացավ ընդդիմադիր այլ թեկնածուների եւ ընտրազանգվածի որոշակի հատվածի աջակցությունը:

Արտասովոր էր իր ձեւով ու բնույթով նաեւ հետընտրական ընդվզումը, որը ստացավ «Բարեւահեղափոխություն» ան-

վանումը: Նախ՝ ընդդիմության համոզմամբ հաղթող թեկնածու, իսկ պաշտոնական տվյալներով՝ երկրորդ տեղը գրված Ռաֆֆի Հովհաննիսյանը մարդկանց հետ անմիջական, անբռնազբոս շփման եղանակով բազմաթիվ երթեր ու ցույցեր անցկացրեց ոչ միայն մայրաքաղաքում, այլեւ տարբեր մարզերում: Տեղի ունեցավ նաեւ աննախադեպ մի իրադարձություն՝ պաշտոնապես հաղթած թեկնածուի եւ ընդդիմադիր ընտրազանգվածի կողմից հաղթող համարվող թեկնածուի հանդիպումը, որտեղ վերջինս առաջ քաշեց «ժողովրդի հաղթանակն ընդունելու» պահանջը: Այդ հիմնական պահանջով էլ Հովհաննիսյանը հացադուլ իրականացրեց Ազատության հրապարակում: Իշխանությունները, սակայն, չընդունեցին Հովհաննիսյանի եւ ոչ մի պահանջ, եւ հետընտրական բողոքի արտահայտություն հանդիսացող հացադուլը, որը բավական երկար տեւեց, եւ մյուս ակցիաները, վերջիվերջո, դադարեցվեցին: Հայտարարվեց, որ պայքարը շարունակվելու է, բայց արդեն այլ եղանակով ու ձեւաչափով:

Ճիշտ է, ՀԱԿ-ը, ՀՅԴ-ն եւ արտախորհրդարանական որոշ ընդդիմադիր ուժեր ու քաղաքացիական հոսանքներ այս կամ այն կերպ իրենց զորակցությունը հայտնեցին Ռաֆֆի Հովհաննիսյանի կազմակերպած հետընտրական գործողություններին, սակայն, մեծ հաշվով, չստեղծվեց ընդդիմադիր նոր ձեւաչափ, որն այդ բողոքը կվերածեր պրոդեմոկրատական ինստիտուցիոնալացված շարժման:

Ընտրություններն առանձնացան նաեւ դետեկտիվ պատմություն հիշեցնող իրադարձություններով: Թեկնածուներից մեկի՝ Պարույր Հայրիկյանի նկատմամբ հրազենային հարձակում կատարվեց, իսկ դատարանը հետագայում՝ որպես այդ հանցագործության կազմակերպիչ, 14 տարվա ազատազրկման դատապարտեց Էպոսագետ ներկայացող նախագահի մեկ այլ թեկնածուի՝ Վարդան Մեղրակյանին: Իշխանությունների ներկայացուցիչները հանցագործությունից անմիջապես հետո, երբ Մեղրակյանը դեռ կասկածյալների թվում չէր, հայտարարեցին, որ հանցագործության հետեւում կանգնած են ինչ-որ քաղաքական ուժեր, որոնք ուզում են ապակայունացնել իրավիճակը: Ընտրությունները կարող էին հետաձգվել, սակայն վերջին պահին Պարույր Հայրիկյանը՝ չնայած առողջական վատ վիճակին, որոշեց շարունակել քարոզարշավը՝ պատճառաբանելով, որ չի ցանկանում ընտրությունների հետաձգման մեջ շահագրգռված ուժերը հասնեն իրենց նպատակին: Սակայն հանրության համար անհայտ մնացին բազմաթիվ հարցեր. այդպես էլ պարզ չդարձան այդ հանցագործության դրդապատճառը եւ այն ուժերը, որոնց մասին ակնարկում էին իշխանությունները:

Շատերի գնահատմամբ՝ ժողովուրդը կրկին չկարողացավ իրացնել իշխանություն ձեւավորելու իր իրավունքը, քանզի ընտրություններն այս անգամ էլ ազատ եւ արդար չէին: Հանրային քաղաքական դիսկուրսում նորից հրատապ դարձավ ներկա վարչակարգի օրոք ընտրություններով իշխանափոխության հասնելու հնարավորության/անհնարինության թեման: Ընտրություններից հետո տեղական եւ միջազգային դիտորդները նշեցին, որ թեեւ, օրինակ, հեռուստաեթերը համեմատաբար հասանելի էր ընդդիմադիր թեկնածուների համար, իսկ ընտրությունների օրը հիմնականում չեղան բռնի գործողություններ, սակայն վարչական ռեսուրսի լայն կիրառման դեպքեր, ընտրացուցակների հետ կապված խնդիրներ, թաղային հեղինակությունների կողմից տարբեր տեսակի ճնշումներ, մի շարք ընտրատեղամասերում ձայների հաշվարկի ժամանակ թույլ տրված կեղծիքներ, այնուամենայնիվ, եղան: Եվրոպական դիտորդական առաքելության զեկույցներում մասնավորապես նշված էր, որ չի ստեղծվել «խաղի» հավասար կանոններ թեկնածուների միջեւ, ինչպես նաեւ չի տրամադրվել «ընտրողներին տեղեկացված ընտրություն կատարելու եւ պատժից երկյուղ չկրելով՝ ազատորեն քվեարկելու հնարավորություն»: Բացի դրանից, ըստ միջազգային դիտորդների, խախտված էր պետության եւ իշխող կուսակցության տարաբաժանման սկզբունքը:

Հարկ է նշել, որ ինչպես ցույց է տալիս միջազգային փորձը, վերոնշյալ պայմանների դեպքում, հատկապես երբ իշխանություններն ու պետությունը սերտաճած են, իշխանափոխություն, արմատական ժողովրդավարական փոփոխություններ, որպես կանոն, հնարավոր են, եթե երկրում ձեւավորված է պրոդեմոկրատական հզոր շարժում՝ իր կուռ ռազմավարությամբ եւ մարտավարությամբ, խաղաղ քաղաքացիական դիմադրություն ցույց տալու պատրաստ քաղաքացիների բազմությամբ: Հենց այդպիսի շարժումն է, որ բացակայում էր 2013թ. փետրվարյան ընտրություններում:

Էդգար Վարդանյան
Քաղաքագետ

Արտագաղթը զսպող ուժերի հասունացման ժամանակը

Տնտեսական մրցակցության եւ սոցիալական արդարության բացակայությունը, ձեռներեցությամբ ազատ զբաղվելու անհնարինությունը, տնտեսական ու քաղաքական մենաշնորհների գոյությունը պետությունից վանեցին իշխող էլիտայի շրջանակից դուրս մնացած բոլոր ունակ տնտեսվարող խմբերին եւ անհատներին:

2013 թվականին Հայաստանի ու աշխարհասփյուռ հայության հանրային գիտակցության մեջ արմատացավ սեփական բնօրրանում «ցեղի» վերացման վախը: Մեծ եղեռնից գրեթե հարյուր տարի անց Հայաստանում կրկին սկսեցին խոսել հայությանը պատած մեկ այլ արհավիրքի՝ «սպիտակ» ցեղասպանության ենթարկվելու վտանգի մասին: Եվ այդ մտավախությունը լուրջ հիմքեր ունի. բնակչության արտագաղթը ներկայում դարձել է երկրի թիվ մեկ խնդիրը:

Սոցիալական մի փոքր շերտի կողմից հարաճուն շահագործման ենթարկվելու հանրային գիտակցումը, արտագաղթի կործանարար թափն ու երկրում ժողովրդագրական պատկերի անմխիթար վիճակը հուսահատություն եւ անելանելիության զգացում են առաջացրել: Շատերը չեն ուզում, բայց ստիպված են արտագաղթել, որովհետեւ ապագա չեն տեսնում թե՛ իրենց, թե՛ իրենց երեխաների համար: Եվ ապագայի անորոշության, «ցեղի» ոչնչացման զգացողության մռայլ խորապատկերին եթե կա մի փոքր մխիթարանք, ապա դա ստեղծված իրավիճակից ելք որոնելու՝ երիտասարդական որոշ շրջանակների գործնական ակտիվությունն է վերջին շրջանում, որը կարող է դառնալ հանրությանը հուսահատության ու անտարբերության թմբիրից հանող, նրան համախմբող եւ արդար պայքարի մղող ուժ:

Տարիներ շարունակ հայրենիքից հեռանալու երեւույթը դիտարկվում էր որպես պատերազմական վիճակի, քաղաքական, սոցիալ-տնտեսական դժվարությունների, իրավական կամայականությունների եւ բացասական այլ գործոնների հետեւանք: Պատկերավոր ասած՝ պարբերաբար ստեղծ-

վում է մի վիճակ, երբ ցավի ու հոգսի բեռան տակ կքած Հայաստան կոչվող «շիկացած կաթսայից» կամ եռացող ջուրն է բնականորեն թափվում, կամ էլ, որպեսզի «կաթսան» չպայթի, իշխող վարչախումբը գիտակցաբար «գոլորշի» է բաց թողնում: Այսպես՝ Հայաստանի Հանրապետության վերջին 22-ամյա գրեթե ողջ ժամանակահատվածը կարելի է բնորոշել իբրեւ վերոհիշյալ պատճառներով երկրից հարյուր հազարավոր մարդկանց հեռանալու պատմական մի շրջան:

Անկախության առաջին տարիներին արտագաղթի պատճառ դարձան Ղարաբաղյան պատերազմի հետեւանքով երկրում ստեղծված անվտանգության պակասուրդը, վախի ու անվստահության մթնոլորտը, ինչպես նաեւ պատերազմի բերած սոցիալ-տնտեսական դժվարությունները: Այդ միտումը շարունակվեց նաեւ 1994թ. պատերազմի ավարտից հետո, երբ բնակչության կենսագործունեության համար տնտեսության անմխիթար վիճակն ինքնին հետպատերազմյան բարդություններ էր ստեղծում: Սակայն 1995-96թթ. ընտրական տարիների բերած քաղաքական համաձայնություններն իրենց հերթին լրացուցիչ ծանրություն հաղորդեցին ՀՀ բնակչության հետպատերազմյան տնտեսական զրկանքներին՝ ստիպելով դարձյալ բռնել տարագնացության ճանապարհը: Այդուհետ աստիճանաբար նշմարվեցին երկրի կառավարման ղեկին գտնվող ուժերի ներքին քաղաքականության լիակատար վնասաբերությունն ու գաղթածին բնույթը: Իսկ ընտրական մեխանիզմների անգործության պայմաններում իշխանության համար քաղաքական մյուս ուժերի «պայքարը» դարձավ հուսախաբված նորանոր զանգվածների՝ երկրից հեռանալու հավելյալ խթան:

Ներքաղաքական անարդյունավետ պայքարի օրակարգը հետագա տարիներին «համալրվեց« պետականության ճգնաժամով: 1999թ. հոկտեմբերի 27-ին Ազգային ժողովում տեղի ունեցած ահաբեկչական ակտը խլեց ԱԺ նախագահի, վարչապետի եւ այլ գործիչների կյանքը: Դրանից հետո բնակչության շրջանում արմատավորվեց նաեւ այն համոզմունքը, որ եթե պետությունը չի երաշխավորում անգամ իր բարձրաստիճան պաշտոնյաների կյանքը, հետեւաբար չի կարող ապահովել սոցիալական մյուս խմբերի անվտանգությունը: Իսկ սկսած 2000 թվականից, երբ նշանակալի դիրքերի հասած նախկին ռազմական օլիգարխիայի հենքի վրա սկսեց ձեւավորվել նոր կառավարող էլիտան, պետությունից հանրության սպասելիքների ճգնաժամն ավելի խորացավ: Նոր քրեաօլիգարխիկ վարչախումբը խոցի նման ախտահարեց պետության առողջ բջիջները՝ նորանոր դիրքեր գրավելով երկրի տնտեսական հարստությունն իր ձեռքում կենտրոնացնելու գործում: Տնտեսական մրցակցության եւ սոցիալական արդարության բացակայությունը, ձեռներեցությամբ ազատ զբաղվելու անհնարինությունը, տնտեսական ու քաղաքական մենաշնորհների գոյությունը պետությունից վանեցին իշխող էլիտայի շրջանակից դուրս մնացած բոլոր ունակ տնտեսվարող խմբերին եւ անհատներին:

Արտագաղթի ալիքը ժամանակավորապես հնարավոր եղավ դադարեցնել միայն 2004-06 թվականներին, այն էլ՝ շինարարության բնագավառում սփյուռքից հսկայական ներդրումներ ապահովելու եւ երկրի տնտեսությունում արհեստական տնտեսական էֆեկտ ստանալու միջոցով: Սակայն հետագա տարիներին երկրի ժողովրդագրական պատկերի վրա աղետալիորեն անդրադարձան «շինարարական փուչիկի» պայթյունը, 2007թ. վերսկսված ներքաղաքական անպտուղ պայքարը, «մարտի 1»-ի ողբերգությունը, համաշխարհային ֆինանսական ճգնաժամի հասցրած վնասները, օլիգոպոլիաների տեսքով տնտեսության բեւեռացումը եւ կոռուպցիայի աննախադեպ չափերը:

2011թ. անցկացված մարդահամարի տվյալների համաձայն՝ երկրի բնակչությունն արդեն կազմում էր 2 միլիոն 871.771 մարդ: Ընդ որում, եթե նախորդ տարիներին Հայաստանը լքող բնակչությունը տարեկան հաշվվում էր մի քանի տասնյակ հազարով, ապա բոլոր պաշտոնական հաշվարկները ցույց են տալիս, որ 2013թ. այն անցնելու է 100 հազարի սահմանագիծը: Սա է պատճառը, որ վերջին տարիներին արտագաղթի թեման գրավեց հանրային դիսկուրսի ողջ բովանդակությունը: Ավանդական հանրային-քաղաքական հիմնախնդիրները՝ արտաքին սպառնալիքի վտանգ, ղարաբաղյան օրակարգ եւ այլն, հետզհետե իրենց տեղը զիջեցին արտագաղթի խնդրին:

ՀՀ վարչապետի կողմից արտագաղթը որպես հեղափոխությունը կանխելու քայլ ներկայացնելուց հետո հանրության շրջանում փորձ արվեց հասկանալ ընդհանրապես խնդրո առարկայի վերաբերյալ պետության եւ իշխող վարչախմբի իրական քաղաքականությունը: Լրահոսում ի հայտ եկան այնպիսի զուգահեռներ, որոնք հաստատում էին պետական «Արի տուն» ծրագրի լիակատար սնանկությունը եւ ՀՀ բարձրագույն իշխանությունների թողտվությամբ ՌԴ կողմից Հայաստանում իրականացնող «Հայրենակիցներ» ծրագրի վտանգները: Դա լրացուցիչ ազդակ էր, որպեսզի արտագաղթի խնդիրը դիտարկվի ազգային անվտանգությանը սպառնացող մարտահրավերների համալիր շաղկապվածության մեջ, այդ թվում՝ իշխող վարչախմբի վարած արտաքին ու ներքին քաղաքականության խորապատկերին:

Այսօր արդեն արտագաղթի խնդիրը դարձել է Հայաստանի ներքաղաքական պայքարում ընդդիմության զինանոցի հիմնարար փաստարկներից մեկը, եւ իշխող վարչախմբի քարոզչությունն այլեւս ի զորու չէ «արտադրել» արտագաղթի ծավալները թաքցնող տվյալներ ու հիմնախնդիրն ապակողմնորոշող թեզեր: 2013թ. նախագահական ընտրություններից անմիջապես հետո սույն թեմային ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի անդրադարձը ենթարկվեց աննախադեպ սարկազմի՝ թեւավոր խոսքի վերածելով մի քանի լրատվամիջոցների ստեղծած «գաղջ մթնոլորտի» մասին նրա արտահայտությունը: Այդ ամենը նպաստեց, որ 2013 թվականին ձեւակերպվի հանրային մեկ այլ «եռացող զանգվածի» ձայնը, որն անվերապահորեն մերժում է թե՛ «կաթսան» կամավոր լքելու, թե՛ իրեն «գոլորշիանալու» պարտադրող ճանապարհները:

Ներկայում քաղաքական պայքարի կիզակետում են հայտնվել «ճորտանալու» կամ արտագաղթելու երկընտրանքի առջեւ կանգնած եւ երկու տարբերակն էլ վճռականորեն մերժող անհատ քաղաքացիներն ու քաղաքացիական խմբերը: Նրանց գործունեությունը կարեւոր ազդակ է՝ հուսալու, որ Արմավիրի մարզի կարկտահարությունից տուժած բնակչության, Գետահովտի, Բյուրականի, Մարցի գյուղացիների, Երեւանի Կոմիտասի 5, Սայաթ Նովայի 12, Ամիրյան 24 հասցեների քաղաքացիների պայքարի ալիքները շուտով կարող են լցնել ողջ Հանրապետությունը՝ դառնալով արտագաղթն ու նրա բերած հետեւանքները զսպող ուժ: Այս անգամ՝ արդեն տեւապես:

Սարո Սարոյան
Պատմաբան, քաղաքական վերլուծաբան

Հասարակության եւ պետության առողջացման ճանապարհին

Քաղաքացիական ակտիվիստների բազմամսյա դիմակայության փորձը Երեւանի Մաշտոցի պուրակում, որտեղ իշխանություններն ամբողջ խաղադրույքը դրել էին ոստիկանության հնարավորության վրա, չէր կարող ի հայտ չբերել ստվերային բիզնեսի անօրինական շահերը պաշտպանող ոստիկանների գործողությունների ողջ սնանկությունը:

Երկրում ազատ ընտրությունների մեխանիզմի արմատավորման ուղղությամբ մեկուկես տասնամյակի անպտուղ ջանքերը հանգեցրին ոչ միայն հասարակության եւ քաղաքական դասակարգի բեւեռացմանը, այլեւ Հայաստանում քաղաքական պայքարի բուն էության ու իմաստի վերարժեւորմանը: 2008թ. ողբերգական ավարտ ունեցած նախագահական ընտրություններից հետո իրենց ակտիվությունը դրսեւորած քաղաքացիական նախաձեռնությունները վերջին տարիներին դուրս եկան Հայաստանի առավել ինքնուրույն քաղաքական երեւույթների շարքը:

Քաղաքական կյանքում կուսակցական-կլանային շահերի տիրապետության քսանամյա ժամանակաշրջանը ճաք տվեց. «Մենք ենք տերը երկրի» կարգախոսով ասպարեզ մտան կազմակերպված քաղաքացիները: Երկիրը պատրաստ չէր «իր նոր տերերի» պահանջների դրսեւորման գործողություններին: Այդ երեւույթների առաջին իրական արդյունքը դարձավ ինչպես իշխող, այնպես էլ քաղաքական էլիտայի համընդհանուր ջղագարությունը: Քաղաքացիական նախաձեռնությունները բոլոր կողմերից ենթարկվեցին քննադատության աննախադեպ գրոհների ու անբարյացակամ վերաբերմունքի: Ընդհանրական դարձավ ոտնձգությունների մեջ «ինչ-որ» ուժերի հասցեագրված մեղադրանքը:

Սակայն առավել մեծ խնդիրը ծագեց այն ժամանակ, երբ հասարակության՝ քաղաքացիական շարժումները չողջունող մասը ոչ միայն դրանց մեջ ոտնձգություն տեսավ սեփական շահերի հանդեպ, այլեւ ակամայից դուրս եկավ քաղաքացիական ակտիվիստների դեմ ուղղակի առճակատման՝ հակագործողություններ կազմակերպելու միջոցով: Դժվար կանխատեսելի հեռանկարի դեմհանդիման առաջացավ քաղաքացիական դիմակայության գծապատկերը: Մաշտոցի պողոտայի Փակ շուկայի հիմնախնդրի շուրջ Երեւանում «դեղին ու կարմիր գլխարկների» դիմակայությունը եւ նույն պողոտայում ոստիկանության հետ (որոնց մի մասը քաղաքացիական հագուստով էր) «հեղափոխականների» դաժան բախումը դարձան գաղափարական փակուղու եւ անելանելիության խորհրդանիշ: Դրանք, միաժամանակ, հասարակության առողջացման նախանշանների արտահայտություն էին:

Չնայած իրենց հանդեպ ժխտողականության եւ անվստահության մթնոլորտի խտացմանը, Հայաստանի քաղաքացիական ակտիվիստները (բնապահպանները, Մաշտոցի պուրակի պաշտպանները, քաղաքային տրանսպորտի սակագների թանկացման հակառակորդները) վերջին երկու տարում կարողացան ոչ միայն լուծել առաջադրված մի շարք խնդիրներ, այլեւ նոր քաղաքական փիլիսոփայություն հաստատել երկրում: Ուղղակի ժողովրդավարության գաղափարները ջարդեցին «վարչակարգի հրաժարականի համար» շարունակաբար ապարդյուն պայքար մղելու՝ կուսակցական-կլանային մտածողության կարծրատիպերը՝ հասարակական-քաղաքական գործածության մեջ դնելով «ինքնորոշված քաղաքացի» հասկացությունը: Արմատապես փոխվեց քաղաքական պահանջների, ինչպես նաեւ առաջադրված նպատակներին հասնելու եղանակների իմաստը:

Քաղաքացիական ակտիվիստները հրատապ դարձրին բոլոր քաղաքացիների՝ անկախ նրանց հասարակական-քաղաքական կարգավիճակից, պարտադիր օրենքին ենթարկվելու պրակտիկան: Հայաստանում տիրող քրեաօլիգարխիկ կարգի պայմաններում քաղաքացիական ակտիվիստների այդօրինակ դիրքորոշումը հանգուցային խնդիր էր իշխանությունների եւ նրանց հետ սերտաճած քաղաքական դասի ու օլիգարխիկ բիզնեսի համար: Հին համակարգին նոր եղանակներ էին անհրաժեշտ՝ պաշտպանելու երկրում հաստատված հակասահմանադրական կարգերն ու ապօրինի շահերը. հասարակության հետ ուղղակի դիմակայությունում հին կարգը կորցնում էր իր կարողությունները:

Քաղաքացիական նախաձեռնությունների հիմնախնդիրը լուրջ իմաստ ստացավ այս տարի, երբ գործող վարչակարգը որոշեց գնալ քաղաքացիների հետ ուղղակի դիմակայության նպատակասլաց գծապատկեր ձեւավորելու ճանապարհով: Քաղաքացիական ակտիվիստների բազմամսյա դիմակայության փորձը Երեւանի Մաշտոցի պուրակում, որտեղ իշխանություններն ամբողջ խաղադրույքը դրել էին ոստիկանության հնարավորության վրա, չէր կարող ի հայտ չբերել ստվերային բիզնեսի անօրինական շահերը պաշտպանող ոստիկանների գործողությունների ողջ սնանկությունը:

Իսկ արդեն այս տարի երեւանյան Փակ շուկայի նախկին տեսքի վերականգնումը պահանջող ակտիվիստների ճանապարհն արգելափակեցին ոչ թե ոստիկանները, այլ շուկայի սեփականատիրոջ աշխատակիցները: Ընդ որում՝ շուկայի աշխատակիցների գործողություններին տրվել էր կազմակերպվածություն եւ գաղափարական բնույթ (ընդհուպ մինչեւ ակտիվիստների գլխարկների պատճենումը, բայց այլ գույնով. կարմիր՝ ընդդեմ դեղինի): Սակայն ամենակարեւորն այն հանգամանքն էր, որ, անկախ շուկայի աշխատողներին փողոց դուրս բերելու կերպից, վերջիններս եւս կանգնեցին սեփական իրավունքների պաշտպանության հիմնախնդրի առջեւ (այն իրավունքների, որոնք սեփականատիրոջ կողմից կարող էին խլվել՝ նրա իրավունքները պաշտպանելուց հրաժարվելու դեպքում): Այսինքն՝ ակտիվությունը ձեռք բերեց կենսականորեն կարեւոր իմաստ:

Հատկապես վերջին հանգամանքն է, որ «շուկայի պաշտպանների» գործողությունները դարձրեց ներքաղաքական լուրջ գործոն. մարդկանց համար այլ ելք չթողեցին, քան «ճարտարապետական հուշարձանի պաշտպանների» ակտիվության ճնշումը՝ «իրենց աշխատանքի իրավունքի ոտնահարման» հայեցակարգ առաջ քաշելու միջոցով: Տվյալ դեպքում շուկայի սեփականատիրոջ կողմից հարկադրված լինելու փաստն առանձնապես նշանակություն չունի: Նպատակը դրված է «վերեւից», եւ այն պետք է իրականացվի՝ միայն դրանով է «կարմիրների» շարժման իմաստը տարբերվում «դեղինների» շարժման իմաստից, որոնք անձամբ են ձեւակերպում իրենց նպատակները: Մնացած բոլոր հարցերում ճամբարների շարժառիթները հավասարազոր են՝ նրանք պաշտպանում են իրենց իրավունքները:

Ոստիկանության հետ քաղաքացիական նախաձեռնությունների դիմակայության առավել սովորական իրավիճակների համեմատ վերը նկարագրված գծապատկերով քաղաքացիական դիմակայության իրավիճակը վերածվում է ավելի լուրջ ներքին հիմնախնդրի, չնայած վերջիններիս հետ դիմակայության էությունը չի փոխվում (ե՛ւ ոստիկանությունը, ե՛ւ «շուկայի աջակիցները» պաշտպանում են օլիգարխների իրավունքները): Ընդ որում՝ դիմակայության ձեւը ձեռք է բերում բացառապես նոր իմաստ:

Ոստիկանության հետ ակտիվիստների դիմակայության դեպքում (ինչպես դա եղավ Մաշտոցի պուրակը պաշտպանելու ժամանակ՝ 2012թ. աշնանը) ակնհայտ էր այդ պուրակի շուրջ ծավալված իրավական վեճի իմաստը: Պուրակի պաշտպանների խնդիրը (հանրային սեփականությունը մաքրել անօրինական շինարարությունից) արմատապես տարբերվում էր ոստիկանության խնդրից, որին մեղադրում էին հանրային տարածքում ապօրինաբար տեղադրված սեփականության պաշտպանության գործողությունների անօրինականության համար: Այդ հանգամանքը կաթվածահար էր արել ոստիկանության գործողությունները, որը ստիպված էր հիմնահարցի լուծման համար օգնություն խնդրել երկրի իշխանություններից:

Ներկայում իշխանությունները երկու ճամբարների քաղաքացիների դիմակայությունը խրախուսող իրենց գործողություններով լղոզում են շուկայի պաշտպանների գործողությունների իրավական հիմքերը եւ նպատակասլաց կերպով փորձում են վարկաբեկել քաղաքացիական նախաձեռնությունը: Հասկանալի է, որ այդ ճանապարհին իշխանությունները շահագրգռված են հակամարտող ճամբարների գործողություններում անօրինականությունների չափաբաժինը մեծացնելու մեջ: Արդյունքում քաղաքացիական ակտիվիստների գործողությունները կորցնում են արդյունավետությունը:

Կարելի է պնդել, որ տվյալ դիմակայության մեջ մշակվում է ամեն տեսակի քաղաքացիական ակտիվություն չեզոքացնելու մոդել: Համենայն դեպս, ոստիկանությունը հակազդող ուժի դերից անցնում է «շուկայի պաշտպանների» շահերը միանշանակ պաշտպանող անարդար դատավորի դերին: Վերջին հանգամանքն անհավասար է դարձնում ուժերը. առաջադրված խնդրի լուծման նկատմամբ ներկայում ցուցաբերվող մոտեցումների դեպքում քաղաքացիական ակտիվիստները հազիվ թե կարողանան հաջողության հասնել:

Եթե նույնիսկ բացասենք նկարագրված իրավիճակը համատարած քաղաքացիական դիմակայության վերածվելու հեռանկարը, անհրաժեշտ է ընդունել, որ իրենց իրավունքների պաշտպանությանը միտված քաղաքացիական շարժումների ճանապարհին (հասարակական կյանքի այս կամ այն ոլորտներում) Հայաստանի հասարակությունը բախվել է անհավանականորեն բարդ մի հանգույցի: Նմանօրինակ գծապատկերով դիմակայությունում արդարության հաստատումը դառնում է դժվարլուծելի խնդիր: Իշխանությունները միշտ կարողանում են քաղաքացիների պահանջներին հակադրել մարդկանց բավականաչափ անձնակազմ, ովքեր ստիպված են պայքարել իրենց աշխատանքային տեղերն ու կարգավիճակը պահպանելու հնարավորության համար: Հայաստանի տնտեսական պայմաններում իշխանությունների խնդիրն այնքան էլ բարդ չէ: Դժվարը խոշոր բիզնեսին ենթակա մարդկանց համոզելն է, որպեսզի նրանք հրաժարվեն քաղաքացիական ակտիվիստների հետ դիմակայությունից, առավել եւս՝ օրինական ճանաչեն վերջիններիս պահանջները:

Առաջին հայացքից թվում է, թե ստեղծված իրավիճակը ելք չի թողնում օրինականության հաստատման ուղի դուրս գալու համար՝ չի ձեւավորվում օրինականության բուն գծապատկերը: Սակայն նման իրավիճակներում համաշխարհային պրակտիկայում եղած ժողովրդական շարժումների փորձի ուսումնասիրությունը թույլ է տալիս պնդել, որ հասարակության՝ օրինականություն պահանջող մասը միշտ կարողանում է իրավապահ մարմիններին ստիպելու համոզիչ եղանակներ գտնել, որպեսզի նրանք ընդունեն այս կամ այն պահանջների օրինականությունը եւ պաշտպանեն այդ պահանջները:

Դա ստացվում է միայն այն դեպքում, երբ քաղաքացիական շարժումն իր գործողություններում օրինականության նկատմամբ հակվածություն է ցուցաբերում ամեն ինչում: Ցանկացած հակադրվող ուժ զրկվում է հենարանից եւ ընդունում օրենքի գերակայությունն ու նրան ենթարկվելու պահանջների օրինականությունը:

Մանվել Սարգսյան
Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոնի գիտական տնօրեն, քաղաքագետ

OPTICS

2013թ. կարեւորագույն իրադարձությունների ժամանակագրությունը

14 հունվարի
Իր արտահերթ նիստում ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը (ԿԸՀ) գրանցեց փետրվարի 18-ին կայանալիք նախագահական ընտրությունների 8 թեկնածու:

21 հունվարի
Հայաստանի նախագահի թեկնածու Անդրիաս Ղուկասյանը հացադուլ հայտարարեց՝ պահանջելով ընտրական գործընթացից դուրս բերել Հայաստանի Հանրապետական կուսակցության թեկնածուին, ում թիմակիցներն ընտրակաշառք էին բաժանում եւ կատարում նախընտրական այլ զեղծարարություններ:

22 հունվարի
Հայաստանում Մեծ Բրիտանիայի դեսպանը հայտարարեց, թե իր երկիրն ափսոսանք է հայտնում, որ խորհրդարանում ներկայացված երեք հիմնական ընդդիմադիր կուսակցություններից ոչ մեկը չի մասնակցում ընտրություններին եւ չի սատարում այլ ուժերի թեկնածուներին:

25 հունվարի
«Ժառանգություն» կուսակցության փոխնախագահ Արմեն Մարտիրոսյանը հայտարարեց, թե ՀՀ նախագահի թեկնածու, ընդդիմադիր «Ժառանգության» առաջնորդ Բաֆֆի Հովհաննիսյանի նախընտրական ծրագրում ասված է, որ իր նախագահությունից հետո հաջորդ վարչակարգի օրոք Հայաստանն արդեն կդառնա Եվամիության անդամ: Նա նշեց, որ «Ժառանգությունը» հանդես է գալիս խորը եւ համապարփակ ազատ առեւտրի գոտու մասին համաձայնագրի եւ Ասոցացման համաձայնագրի շուտափույթ ստորագրման ու իրականացման օգտին եւ, բնականաբար, կողմնակից չէ, որ Հայաստանը մտնի Մաքսային միություն Ղազախստանի, Ռուսաստանի ու Բելառուսի հետ:

31 հունվարի
ՀՀ նախագահի թեկնածու, «Ազգային ինքնորոշում» միավորման առաջնորդ Պարույր Հայրիկյանը երեկոյան ստացած հրազենային վնասվածքով տեղափոխվեց հիվանդանոց:

8 փետրվարի
Հայաստանի ազգային անվտանգության ծառայությունը (ԱԱԾ) հաղորդեց, որ ՀՀ նախագահի թեկնածու, «Ազգային ինքնորոշում» միավորման առաջնորդ Պարույր Հայրիկյանի նկատմամբ կատարված մահափորձի գործով ձերբակալվել է երկու մարդ:

10 փետրվարի
ՀՀ նախագահ թեկնածու, «Ազգային ինքնորոշում» միավորման առաջնորդ Պարույր Հայրիկյանը դիմում ներկայացրեց Սահմանադրական դատարան նախագահական ընտրությունների օրը երկու շաբաթ հետաձգելու խնդրանքով: Հաջորդ օրը Հայրիկյանը Սահմանադրական դատարանից ետ վերցրեց իր դիմումը:

12 փետրվարի
«Արեւելյան գործընկերության» շրջանակներում Թբիլիսիում անցկացված ոչ պաշտոնական հանդիպման ժամանակ ԵՄ ընդլայնման եւ Եվրոպական հարեւանության քաղաքականության հարցերով հանձնակատար Շտեֆան Ֆյուլեն հայտարարեց. «Մենք հուսով ենք, որ Վիլնյուսում կայանալիք բարձր մակարդակով հանդիպումը կոնկրետ արդյունքներ կտա, եւ մեզ կհաջողվի Ասոցացման համաձայնագիր կնքել Վրաստանի, Մոլդովայի եւ Հայաստանի հետ, ինչպես նաեւ առաջխաղացում ապահովել Ադրբեջանի հետ բանակցություններում»:

19 փետրվարի
Հայաստանի ԿԸՀ-ն հրապարակեց հանրապետությունում տեղի ունեցած նախագահական ընտրությունների նախնական արդյունքները: Երկրի գործող նախագահ Սերժ Սարգսյանի օգտին քվեարկել է 861.160 ընտրող կամ նրանց ընդհանուր թվի 58,64 տոկոսը: Երկրորդ արդյունքը ընդդիմադիր «Ժառանգություն» կուսակցության առաջնորդ Բաֆֆի Հովհաննիսյանինն է՝ 36,75 տոկոս (539.672 ձայն), երրորդ տեղում է ՀՀ նախկին վարչապետ Հրանտ Բագրատյանը՝ 2,15 տոկոս (31.643 ձայն):

19 փետրվարի
ԵԱՀԿ/ԺՄԻԳ դիտորդական առաքելության, ԵԽԽՎ-ի եւ Եվրախորհրդարանի նախնական զեկույցում ասվում է, որ փետրվարի 18-ին Հայաստանում անցկացված նախագահական ընտրությունները, ընդհանուր առմամբ, լավ էին կազմակերպված եւ բնութագրվում են հիմնարար ազատությունների հանդեպ հարգանքի դրսեւորմամբ:

19 փետրվարի
Ընդդիմադիր «Ժառանգություն» կուսակցության առաջնորդ Բաֆֆի Հովհաննիսյանը Ազատության հրապարակում տեղի ունեցած յուրօրինակ մամլո ասուլիս-հանրահավաքում Սերժ Սարգսյանից պահանջեց «ընդունել հայ ժողովրդի հաղթանակը»՝ նրան խորհուրդ տալով հակառակ դեպքում մտածել հրաժարականի մասին:

19 փետրվարի
ՀՀ նախագահի թեկնածու, քաղաքագետ Անդրիաս Ղուկասյանը նախագահական ընտրությունների հաջորդ օրը դուրս եկավ շուրջ 30 օր տեւած հացադուլից:

4 մարտի
Հայաստանի Սահմանադրական դատարանը քննության ընդունեց փետրվարի 18-ին անցկացված նախագահական ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչելու մասին ՀՀ նախագահի նախկին թեկնածու, «Ժառանգություն» կուսակցության առաջնորդ Բաֆֆի Հովհաննիսյանի հայցը:

10 մարտի
Ժառանգություն» կուսակցության առաջնորդ Բաֆֆի Հովհաննիսյանն անժամկետ հացադուլ հայտարարեց Ազատության հրապարակում:

14 մարտի
Հայաստանի Սահմանադրական դատարանը մարտի 14-ի նիստում ուժի մեջ թողեց փետրվարի 18-ին երկրում անցկացված նախագահական ընտրությունների վերաբերյալ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի փետրվարի 25-ի որոշումը:

18 մարտի
Պաշտոնական Բրյուսելը Հայաստանին զգուշացրեց, որ անհնար է Ռուսաստանի նախաձեռնած Մաքսային միությունում մասնակցությունը համատեղել Եվրամիության առաջարկած ազատ առեւտրի գոտու մասին համաձայնագրի հետ:

22 մարտի
Երեւանի Ազատության հրապարակում հացադուլի մեջ գտնվող՝ ընդդիմադիր «Ժառանգություն» կուսակցության առաջնորդ Բաֆֆի Հովհաննիսյանին, ով երկրորդ տեղն էր գրավել փետրվարի 18-ին ՀՀ-ում անցկացված նախագահական ընտրություններում, այցելեց Հայաստանում ԱՄՆ արտակարգ եւ լիազոր դեսպան Ջոն Հեֆերնը՝ տիկնոջ հետ:

31 մարտի
ՀՀ նախագահի նախկին թեկնածու, «Ժառանգություն» կուսակցության առաջնորդ Բաֆֆի Հովհաննիսյանը դադարեցրեց ի նշան բողոքի ընդդեմ նախագահական ընտրությունների արդյունքների՝ մարտի 10-ին Ազատության հրապարակում հայտարարած հացադուլը:

10 ապրիլի
Մեն նահանգի Ներկայացուցիչների պալատը եւ Սենատը ընդունեցին համատեղ բանաձեւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախությունը ճանաչելու մասին: Բանաձեւի հեղինակները, մասնավորապես, կոչ են անում ԱՄՆ նախագահին եւ Կոնգրեսին պաշտպանել Ղարաբաղի ինքնորոշման ու անկախության իրավունքը:

18 ապրիլի
Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանն իր գլխավորած իշխող՝ Հանրապետական կուսակցության գերագույն եւ գործադիր մարմինների նիստում կառավարության ղեկավարի պաշտոնում առաջարկեց վարչապետի պաշտոնակատար Տիգրան Սարգսյանի թեկնածությունը:

5 մայիսի
Տեղի ունեցան Երեւանի ավագանու ընտրությունները: Պաշտոնական տվյալներով՝ Հայաստանի հանրապետական կուսակցությունը (ՀՀԿ) ստացավ ընտրողների ձայների 55,89 տոկոսը, «Բարգավաճ Հայաստան»

կուսակցությունը՝ 23,07 տոկոսը, «Բարեւ Երեւան» դաշինքը՝ 8,48 տոկոսը, Հայ ազգային կոնգրեսը՝ 3,8 տոկոսը, ՀՅ դաշնակցությունը՝ 3,8 տոկոսը, «Օրինաց երկիր» կուսակցությունը՝ 3,73 տոկոսը եւ «Առաքելություն» կուսակցությունը՝ 0,64 տոկոսը:

16 մայիսի
Ստրասբուրգում տեղի ունեցավ Եվրախորհրդի 123-րդ նիստը, որի ընթացքում Հայաստանը ստանձնեց Եվրոպական խորհրդի Նախարարների կոմիտեի նախագահությունը:

18 հուլիսի
Հանրային դժգոհության հերթական ալիք առաջացրեց Երեւանում հասարակական տրանսպորտի ուղեվարձի՝ պաշտոնապես հայտարարված թանկացումը:

22 հուլիսի
Երեւանում թափ է առնում «Չեմ վճարի150 դրամը» քաղաքացիական ակցիան, որի մասնակիցները բողոքում են ընդդեմ մայրաքաղաքում հասարակական տրանսպորտի սակագների աճի:

25 հուլիսի
Երեւանի քաղաքապետ Տարոն Մարգարյանը հրավիրեց կառույցների ներկայացուցիչների, քաղաքային տրանսպորտի պատասխանատուների մասնակցությամբ խորհրդակցություն, որտեղ հանձնարարեց չեղյալ համարել հասարակական տրանսպորտում ուղեվարձի փոփոխման (բարձրացման)մասին իր իսկ որոշումը:

31 օգոստոսի
«Ազատենք հուշարձանը օլիգարխից» նախաձեռնող խումբն անցկացրեց ակցիա՝ ի պաշտպանություն Փակ շուկայի, որի նոր սեփականատերը՝ ԱԺ պատգամավոր, «Երեւան սիթի» սուպերմարկետների ցանցի սեփականատեր Սամվել Ալեքսանյանը, ինչպես ենթադրվում է, մտադիր է այն վերափոխել սուպերմարկետի: Փակ շուկան գրանցված է մայրաքաղաքի՝ պետության կողմից պահպանվող ճարտարապետական շինությունների ցուցակում:

3 սեպտեմբերի
Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը սեպտեմբերի 3-ին Մոսկվայում ռուսաստանցի պաշտոնակցի՝ Վլադիմիր Պուտին հետ երկկողմ բանակցությունների ժամանակ հայտարարեց, որ Հայաստանը կանդամակցի Մաքսային միությանը եւ այդ նպատակով կձեռնարկի անհրաժեշտ գործնական քայլեր, իսկ հետագայում կմասնակցի Եվրասիական տնտեսական միության ձեւավորմանը:

4 սեպտեմբերի
Լիտվայի արտաքին գործերի նախարար Լինաս Լինկյավիչուսը, ով նախագահում է Եվրամիությունում, հայտարարեց, որ, ընդունելով Մաքսային միություն մտնելու մասին որոշում, Հայաստանն արգելափակեց ԵՄ-ի հետ Խորը եւ համապարփակ ազատ առեւտրի մասին համաձայնագիր ստորագրելու իր շանսերը: Նույն օրը Եվրախորհրդարանի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ, Եվրոպայի ժողովրդական կուսակցության փոխնախագահ Էլմար Բրոկն իր հերթին հայտարարեց, որ Հայաստանը չի կարող մտնել Մաքսային միություն եւ միաժամանակ Եվրամիության հետ ասոցացման համաձայնագիր ստորագրել:

4 սեպտեմբերի
«Եվրամիությունը սպասում է, որ պաշտոնական Երեւանը պարզաբանումներ կտա երկրի՝ Ռուսաստանի նախաձեռնած Մաքսային միություն մտնելու մտադրության մասին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի հայտարարության կապակցությամբ»,- լրագրողների հետ հանդիպման ժամանակ հայտարարեց ԵՄ արտաքին քաղաքականության եւ պաշտպանության գծով ԵՄ գերագույն ներկայացուցիչ Քեթրին Էշթոնը: Նույն օրը Հայաստանի նախագահի նստավայրի դիմաց անցկացվեց բողոքի ակցիա՝ ընդդեմ Մաքսային միությանը Հայաստանի անդամակցության որոշման:

7 սեպտեմբերի
Վիլնյուս ժամանած՝ Հայաստանի արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանը հավաստիացրեց, որ, չնայած Ռուսաստանի գլխավորած Մաքսային միություն մտնելու որոշմանը, իր երկիրն ուզում է համագործակցել Եվրամիության հետ:

11 սեպտեմբերի
Հայաստանի արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանը հայտարարեց, որ Հայաստանը ցանկություն ունի ստանալու Համագործակցության Շանհայի կազմակերպությունում (ՀՇԿ) դիտորդի կարգավիճակ եւ այդ նպատակով դիմեց ՀՇԿ:

3 հոկտեմբերի
Ստրասբուրգում Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը ելույթ ունեցավ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵԽԽՎ) լիագումար նիստում:

16 հոկտեմբերի
Բրյուսելում Հայաստանի Ազգային ժողովի նախագահ Հովիկ Աբրահամյանը Եվրախորհրդարանի փոխխոսնակ Յացեկ Պրոտասիեւիչի հետ քննարկեց իր երկրի՝ Մաքսային միություն մտնելու որոշումը:

24 հոկտեմբերի
Աշխատանքային այցով Մինսկում գտնվող՝ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը մասնակցեց ընդլայնված կազմով Եվրասիական տնտեսական բարձր խորհրդի նիստին, որտեղ քննարկման էին դրված Ռուսաստանի, Բելառուսի եւ Ղազախստանի Մաքսային միությանն (ՄՄ) ու Միասնական տնտեսական տարածքին (ՄՏՏ) Հայաստանի միավորմանը վերաբերող երեք փաստաթղթեր, որոնք ընդունվեցին:

31 հոկտեմբերի
Հայաստանում տեղակայված 102-րդ ռուսական ռազմահենակետի հրամանատար, գնդապետ Անդրեյ Ռուզինսկին հայտարարեց, որ եթե Ադրբեջանի ղեկավարությունը որոշի ուժային ճանապարհով վերականգնել Լեռնային Ղարաբաղի նկատմամբ վերահսկողությունը, ապա ռուսական ռազմահենակետը կարող է մասնակցել զինված հակամարտությանը՝ ՀԱՊԿ-ի շրջանակներում Ռուսաստանի ստանձնած պայմանագրային պարտավորություններին համապատասխան:

5 նոյեմբերի
Երեւան ժամանած՝ Միսկի խմբի համանախագահները «կողմերին կոչ են անում զսպվածություն դրսեւորել տեղերում, ինչպես նաեւ իրենց հրապարակային հայտարարություններում: Ռազմական գործողություններ, հատկապես այս պահին, կարող են դիտվել իբրեւ խաղաղ գործընթացին վնասելու փորձ»:

13 նոյեմբերի
Խորհրդարանական խմբակցությունների մեծամասնությունը բոյկոտեց Հայաստանի կողմից Լեռնային Ղարաբաղի անկախությունը ճանաչելու մասին օրինագիծը, որը ԱԺ էր ներկայացրել «Ժառանգություն» խմբակցության ղեկավար Զարուհի Փոստանջյանը: Օրինագիծն առաջին ընթերցմամբ չանցավ, քանի որ նրա օգտին քվեարկել էր միայն 10 պատգամավոր, դեմ քվեարկություն չկար, իսկ ընդդիմադիր պատգամավոր Ալեքսանդր Արզումանյանը ձեռնպահ էր մնացել:

19 նոյեմբերի
Վիեննայում տեղի ունեցավ Հայաստանի ու Ադրբեջանի նախագահներ Սերժ Սարգսյանի եւ Իլհամ Ալիեւի հանդիպումը, որը շարունակվեց երկու երկրների արտգործնախարարներ Էդվարդ Նալբանդյանի ու Էլմար Մամեդյարովի, ինչպես նաեւ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ Իգոր Պոպովի (Ռուսաստան), Ջեյմս Ռորլիքի (ԱՄՆ), Ժակ Ֆորի (Ֆրանսիա) եւ ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ Անջեյ Կասպշիկի մասնակցությամբ: Սա նախագահների առաջին հանդիպումն էր 2012թ. հունվարին Սոչիում կայացած գագաթաժողովից հետո: Նախագահները համաձայնեցին ազդակ հաղորդել խաղաղ կարգավորման ձեռքբերմանն ուղղված հետագա բանակցություններին եւ հանձնարարեցին իրենց ԱԳ նախարարներին՝ համանախագահների հետ միասին, արվածի հիման վրա շարունակել աշխատանքը՝ խաղաղ գործընթացի ակտիվացման նպատակով:

29 նոյեմբերի
Սերժ Սարգսյանը մասնակցեց Արեւելյան գործընկերության պետությունների ղեկավարների Վիլնյուսում տեղի ունեցած 3-րդ գագաթաժողովին եւ հանդես եկավ ելույթով: Նախագահը չստորագրեց ԵՄ-ի հետ Հայաստանի Ասոցացման մասին համաձայնագիրը: Գագաթաժողովում ընդունվեց Հայաստանի Հանրապետության եւ Եվրամիության միջեւ հետագա համագործակցության վերաբերյալ համատեղ հայտարարություն:

2 դեկտեմբերի
ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը երկօրյա պետական այցով ժամանեց Հայաստան: Այցի շրջանակներում Ռուսաստանի եւ Հայաստանի նախագահները եղան 102-րդ ռուսական ռազմահենակետում: Պուտինը մասնակցեց նաեւ հայ-ռուսական միջտարածաշրջանային երրորդ համագումարի աշխատանքներին: Երեւանում կայացան հայ-ռուսական բարձր մակարդակի բանակցություններ, քննարկվեցին երկկողմ համագործակցությանը վերաբերող կարեւոր հարցեր: Բանակցությունների արդյունքում ստորագրվեցին մի շարք համատեղ փաստաթղթեր:

Կազմեց
Կարապետ Կալենչյանը

Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոնը 1994թ. հիմնադրել է ՀՀ առաջին արտգործնախարար Ռաֆֆի Կ. Հովհաննիսյանը՝ արժանանալով հայաստանյան եւ Սփյուռքի աջակիցների լայն շրջանակների զորակցությանը: Հետեւելով համաշխարհային զարգացումներին, գիտելիքների հիմքեր խարսխելով, հանրության հետ երկխոսություն ծավալելով՝ Կենտրոնը հետխորհրդային տիրույթում հանդես է գալիս որպես երկրաքաղաքական ստեղծագործական մտածողություն ձեւավորող եւ միջազգային միջավայրի համապարփակ ընկալմանը նպաստող ուժ: Վերջին շրջանում Կենտրոնն առաջնահերթ տեղ է հատկացնում տարածաշրջանային անվտանգության ու համագործակցության, քաղաքացիական կրթության, պետության եւ ազգի համար վճռորոշ՝ ներքին ու արտաքին քաղաքականությունների կիրառական հետազոտությանը:

Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների
հայկական կենտրոն

ՀՀ, 0033 Երեւան, Երզնկյան 75
Հեռ՝ (37410) 528780, 274818
Ֆաքս՝ (37410) 524846
Էլ.փոստ՝ root@acnis.am
Վեբկայք՝ www.acnis.am

2013թ. Երեւան